

# Ս Է Ր

## Մ Տ Ե Ր Ի Մ Ժ Ո Ղ Ո Վ Ր Պ Ե Մ Ա Ն

Շարժանք Երկու անգամ  
կը հրատարակուի :  
Ստորագրութեան տեղն  
Իմամ Ալի խան վարի  
յարկը թիւ 15



Տարեկան գինն է կանխիկ  
դուրուշ 100 :  
Դուրսերէն բաժանորդ  
եղողները փոստային  
ծախքը վճարալու են :

ՅՈՒՂԻՍ 25

Գ. ՏԱՐԻ 1863

ԹԻՒ 22

### ՀՍՐԻԻՐ ԴՈՒՐՈՒՇՈՎ ԱՐՁԱԿՈՒՄ

Կըսեն թէ՛ ստամանս բան չունեցած տոտենը այլ եւ այլ գէտքերով որ եւ է մէկ նպատակին հասնելու համար այլ եւ այլ մարդկանց կը ներկայանայ, ոմանց՝ սիրոյ հրեշտակներու ձեւով, ոմանց քուսանի ձեւով, ոմանց մեջուխեչայի ձեւով, մեզի այլ չեմ գիտեր ինչ գաղտնի նպատակաւ մը աներեւոյթաբար թերադրեց, քանի մը որ՝ խոշորձորի գիւղն երթալու փափաքն ստանալու : Եւ հետեւաբար իր նպատակին հասաւ :

— Մարդ չիրնար մեղադրել զմեզ անչուշա, երբ լսենք թէ Սասունձոյ ընտրելոյ մէկուն վրայ գայթակղեցընելու գիտամաք ըլլալու էր այս թերադրութիւնը, վասն զի՝ ուրիշ ո՛ր ստիպողական գործերով զբաղած ատենն իս յանկարծական ազգամաք մը հեռաւոր տեղ մը երթալու իղձն արժարձ էր ՚ի մեզ, բայց եղածը եղած է : գանք եղելութեան վրայօք ստացած տեղեկութիւններնու :

Քրիստոնէից քիչ դժկամակութիւն ստացընելու սուխթ չէ վերնադիրը, եւ

յիբաւի՝ որ Քրիստոնէ չաշկար ընդ լսեն՝ Հոգեւոր Հօր մը իր խոստովանորդւոյն աբշակձան խորհուրդը տնօրինելու համար հարիւր դուրուշ պահանջելը, եւ ահա այս է որ դմեղ նոյն դժկամակելի եղելութեան առթիւ այս անցուկ թերթերնու մէջ խոշորձորն ու ստամանս բերել թխմելուն ստիպեց : Մեզի եզած պատմութիւնը յետեւեալն է :

Մտնու որ ծոցուր կեոչ զհամար մանկաբարձ բժիշկի մը անհրաժեշտ պետքը տեսնուելով, Քանի մը բարերար զգացման տէր անձինք 1200 դահէկանի պէտքն հողալու համար թողուցէ մը ընելու որոշումը տուած ըլլալով այդ պաշտօնը կասարելը մասնաւորի մը կը յանձնեն, որն որ իրեն յանձնուած պաշտօնը կտտարած ատեն կարօտելոյ մը կարօտէն ինք ալ կարօտ մը զգալով ( Խեղճ ստամանս հոս ալ պէտք եղաւ թխմել ) ստամանին փորձութիւնովը քանիմը դահէկան ալ իրեն կը հողայ . . . մնաց որ այս առաքինասէր անձը Հռովմէական դոմնուելովը, անչուշա ՚ի Քրիստոնէական զգացմանէ շարժեալ՝ խոշորձորն առաջնորդին կը խոստովանի իր մեղքը խղճահար Վերապատուելին, լուրը խո

հականութեամբմը , մեղաւորին մեղացը  
յապաչխարութիւն՝ կառաչարկէ որ՝  
հարիւր դահեկան ողորմութիւն չնորհէ  
'ի քառութիւն յանցանայն : Եւ որպէս զի  
իր յանցանաց տէր ըլլալը չճանչցուի կ'ա-  
ռաջարկէ որ սոյն դամարն իրեն յանձ-  
նէ\* , որպէս զի իւր ձեռօք ժամ յա-  
ռաջ էճանչնը տեղն երթայ եւ ասանկով  
արձակումն ալ ընդունելու արժանանայ :

Տարակուսեալ խոստովանորդին որ-  
չափ որ այդ դամարը յայթայթելու ան-  
կարողութիւնը գիտնար , յոյսը մարդ-  
կանց գորսաւրն է , կը յուսայ թերեւս  
տեղէ մը ճարել . ուստի կորագլուխ եւ  
մորմընեալ իր տունը կը դառնայ . հե-  
տեւեալ օրը նոյն գիւղին մէջ Լուսա-  
ւորջական կարգէ քահանայի մը որ  
վաղեմի մտերմութիւն ունին եղեր , կը  
մատչի եւ կարեւոր ինդրոյ մը համար  
հարիւր դահեկան իրեն չնորհել բարե-  
հաճիլը կը թախանձէ : Քահանան որ ոչ  
ինչ նուազ խեղճ է փոխառուէն իր ան-  
կարողութիւնը պարզապէս կը խոս-  
տովանի . ան ատեն Պ . խոստովանոր-  
դին կը հարկադրի , իբրեւ խորհրդակցի  
մը , ինչ բանի համար այդ 100 զուրու-  
ջնս սէտք ունենայք յոյսնել . որուն  
վրայ քահանան այսպէս խոստովա-  
նողը ըսելու կը սաստէ ու կ'ըսէ » Այ-  
» բարս դուն կը մեղանչես կոր . Բրիտտ  
» նէական կրօնքը մէզի ասանկ բանի մը  
» բնաւ ներումն չտուած ատեն , ինչ  
» պէս կրնայ ըլլալ որ վարդապետ մը  
» մանաւանդ Հովմէական ըլլալով ա-  
» սանկ սիճակէսնոթիւն մը բնելու զի  
» ջանի , դուն սխալ իմացեր ես աղբարս  
» ան քեզի բաժնէ որ՝ ասանկ մեզք մը  
» սուանց փոխարինի անքաւելի է , պէտք  
» է տիրջը վերագարձնես . իսկ թէ կա-  
» բողութիւն չունիս դոնէ . սպաշխարու-  
» թեան համար այսքան դրամ աղբար  
» տաց տուր . եւ աս ալ օրէնք է : — Չէ  
» Տէր պապա ան ինձի ձեռօքդ բաժնէ

\* Աստուած տայ սուս ըլլայ՝ եւ եթէ սուս  
է՝ մեզքը պատմողին չիւնքը .

» չբաւ . Ֆախաթ պէլքի ետղը իմա  
» ցայ . . . :

Եւ փառք յախտեանս ամէն :  
Հետեւեալ օրը խղճահար խոստո-  
վանորդինիս կրկին կը ներկայանայ խոս-  
տովանահօրը :

« Օ՛ հօշ կեւաին . նէ՞ ետբարն պա-  
» գալը . . . եղբայրս — Նէ՞ ետբայրմ՝  
» Վաղապետ . — Եւ սրբարը շարժե-  
» տարիք իթտի՛նմի : — Խոսքը Վար-  
» դապետ , հայկմի պիլմէզմիսին , նէ՞ տե-  
» վիրտէյիզ շինտի բաւտոյշ քառտաչա  
» եիւզ զուրուշը թիթրէր վերմէդէ .  
» — Քատը եօրանըք խտէմէզ եիւզ  
» զուռուշ կէլմէաիքճէ արձակում , \*օփա-  
» նոֆադիօն նօն չէ , նօն չէ եօք տուր :  
» — Վարդապետ , նէ՞ ետբայրմ՝ ճանրմ՝  
» Եաթաք եօրկանը՝ մը սաթայրմ , չօ-  
» լուք չօճուքտան ութանը եօրում , հէփտի  
» պիլքի քի խոստովանանք օլաում , յիտուս  
» ալմադսամ՝նէ տերէր : — Օրայը պի-  
» լիեօրսան չօք ուղուն էթմէ , կիթ ետ  
» թաք սաթ եօրկան սաթ . եիւզիւ կէ-  
» թիլմէդէ պաք : — Ճանրմ չլուք չօ-  
» ճաք ներտէ եաթաքն եաթաղը սաթար-  
» սամ : — Պէն նէ՞ ետբայրմ թէնձիրէ-  
» նի թաւանը սաթ . — Եթմի ներտէ  
» փիշիբէլիմ . — Պիր պուտուկ իքի զա-  
» սուչայ տրք :

Աւերկընընէնք եղածը եղած է , միայն  
մեզի կերեւի թէ այս ճշմարիտ չկրնար  
ըլլալ , մանաւանդ զի չեղած հաւատալ կը  
սիրէնք . Պէօյիք տերէ ալ ստոք նման  
այս օրերս՝ ոչ թէ եղբուրթիւն այլ բամ-  
բասանք մը անցեր է , բայց շատերը կը  
պնդեն թէ դործն անանկ չէ թէպէտ  
եւ պատմողը ամենաճշմարտախոս մէկն է ,  
եւ հակառակ պնդողն ալ չերեւար սուտ  
դուրցերու բնդունակ մէկն ըլլայ . ինչ որ  
է կարելի է ադ սխալ ըլլայ , բայց մեր  
պատմածը այդ չէ :

Հիմա կը մնայ մեզ միանդամ խոր-  
հիլեթէ կղերն՝ այս եւ այսպիսի եղբու-  
թեանց մէջ իր անխոհեմութեամբը բամ-  
բասանաց տեղի կուտայ՝ ոչ ապարկէն

« Բրիտանիայ թեան Հեղինակ Օրենսդրին  
 սա անիծիցը տակ կը մնայ » « Այ է մարդ-  
 » չդալ գայթակղութեան , բայց վայ այն-  
 » միկ , յոր ձեռն գայցէ . լաւ էր նմա թէ  
 » վե՛մ երկանարար կախեր զսլարանոցէ  
 » նորա եւ անկանէր 'ի ծով քան թէ դայ-  
 » թակղեցուցանէ զմի որ 'ի փսքրկանցս  
 » յայսցանէ » . Սիկէ՛ (կղերն սր սոսկ  
 » անոնք քարոզելու պաշտօնն է հաղած՝)  
 կրնայ անոնց ճշմարտութիւնն ուրա-  
 նալ . . . . :

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Տես թիւ 14-15

Նախընթաց թերթերնու մէջ Հոսե-  
 րոսի վարուց և իւր վրայ եղած այլևայլ  
 կարծեաց տեղեկութիւն տալ ջանացինք ,  
 այս անգամ կողմէնք իւր գրուածոցը վը-  
 րայ համառօտ կերպով մը խօսել : Իդիա-  
 կանի սքանչելի վիպասանական քերթ-  
 ուածին գլխաւոր նիւթն Ագամեմնոնի և  
 Աքիլլէսի իրարու վրայ զգացած անհաշտ  
 յոռութիւնն է . ճարտար քերթողն այս  
 գրուածովս յիտուն և մէկ օրուան միջոցի  
 մէջ անցած դէպքերուն պատմութիւնը  
 կրնէ , Աքիլլէսի և Ագամեմնոնի մէջ  
 եղած գժտութեանն ինչուան Հեկտորի  
 յուղարկւորութիւնը : Գլխաւոր նիւ-  
 թին թէպէտ Աքիլլէսի յոռութիւնն ա-  
 ռած է , սակայն անով իւր առջևը լայն  
 ասպարէզ մը կը բանայ իւր բանաստեղ-  
 ծական աշխոյժն և հանձարը ցցունելու  
 թէ կենդանի ստորագրութեամբ և թէ  
 բանից կարողութեամբ :

Այս յիտուն և մէկ օրուան մէջ պա-  
 տահած գեպքերն այսպէս կարգի մը ա-  
 ռած է Հոսերոս : Առաջին օրը Խրի-  
 սէս՝ Սպորդոնի պաշտօնեայն կարհա-  
 մարհուի , իր Խրիսանոյշ աղջկան յախը-  
 տակութեանը պատճառաւ : Տասներորդ  
 օրը Աքիլլէս Ագամեմնոնէն կը նախատ-  
 ուի . տամբ և երկու օր անցնելէն ետքը

Թեախ Ագամեմոնայ կալաչէ որ իր  
 որդւոյն եղած արհամարհանաց վրէժն  
 ինչգրուի և երկրորդ օրը , որ քսան և  
 մէկերորդ օրն է , Ագամեմնոն պատե-  
 ռազմ կը հրատարակէ : Նոյն օրուան  
 պատերազմին մէջ մեռեալներն հե-  
 աեեալ օրը կը թաղուին . քսան և հին-  
 գերորդ օրը կրկին անգամ պատերազ-  
 մով իրարու հետ կը զարնուին և միւս  
 օրը երրորդ պատերազմն կը լլայ՝ ուր կը  
 մեռնի Պարոկի : Քսան և եօթներորդ  
 օրը Աքիլլէս և Ագամեմնոն իրարու հետ  
 կը հաշտուին և չորրորդ պատերազմն  
 կը լլայ . քսան և ութերորդ օրը Պարոկ-  
 ղի յուղարկւորութիւնը կը կատարուի  
 և երկրորդ օրը 'ի պատիւ նորին՝ շիրմին  
 քով խաղարկութիւններ ընել կուտայ  
 Աքիլլէս : Տասն և երկու օր՝ երկու կող-  
 մանէ ալ լուութիւն կը լլայ և ետքը քա-  
 ռասներորդ և առաջներորդ օրը Հեկտոր  
 կը մեռնի և դիակը կարհամարուի . նոյն  
 օրը աստուածք ալ կոկոսին այս արիւն-  
 ոտչա պատերազմին գործակցութեան  
 մասնակից ըլլալ . Պրիամ անպաշտով  
 կազատէ իր որդւոյն դիակը , ու աման օ-  
 ղին ետքը Տրոյիայ բերելով յուղարկա-  
 ւորութեան հանդէսն անհարմիր ցաւօր  
 և տրամութեամբ կը կատարէ , որով կը  
 լայ յիտուն և մէկ և վերջին օր՝ Ա-  
 հաւասիկ Իդիականի համառօտութիւ-  
 նը :

Իսկ Արիստիանը Իդիականին շա-  
 բայարութիւն մը կրնայ սեպուիլ և Հո-  
 մերոսի հանձարոյն արժանաւոր և իրեն  
 անմահ փառացի առիթ քերթութիւն  
 մը . Իդիականին մէջ խօսող անձն՝ ինքն  
 իսկ քերթող Հոմերոսն է իբրև պարզ  
 պատմիչ մը : Իսկ Արիստիանին մէջ  
 դիւցազն Արիստեո կարգաւ կը պատմէ  
 իր զխէն անցած դէպքերը , Տրոյիայ ա-  
 դէտակտ պատերազմին վերջանալէն ինչ-  
 ուան իր կախիստի կողմէն մէկնելը ,  
 շատ դժուարութեամբ ի՞նչ ակէ իր հայ-  
 ըննի երկիրը դառնալը և աստուածոց  
 միջնորդութեամբ խաղաղութիւն գրա-

նալը : Աղիսական քերթութիւնն ալ այսպէս կը վերջանայ : Երկու գլխաւոր վիպասանական քերթութիւններէ զատ Հոմերոսի անուամբ ուրիշ զանազան գրուածներ ալ կան , կամ անոնց մէջ կը յիշատակուին , որոնցմէ շատին հարազատութեանը վրայ տարակոյս ունին հըմուտ քննաբանք : Գարձեալ ծիծաղաշարժ քերթութիւնք , որ Եղիականի նըմանութեամբ գրուած է . և թէպէտ հասարակօրէն Հոմերոսի կընծայուի , բայց աւելի ուշիմք կըսեն թէ Հոմերոսի ոճէն բոլորովին տարբեր գրութիւն մըն է և յունական դարութեանց նախնասօրն անպատուութիւն է այնպիսի անյարգար և անոճ գրութիւն մը իրեն կընծայելը : Պուտաբոս կաւանդէ թէ կարիացի Պիգրետէս անուամբ հետեակ քերթողի մը աշխատասիրութիւնն ըլլայ : Երբոց և նուազաց մէջ Ապոլոնի համար շնուած երգ մը իրեն կընծայուի :

Զարմանք չէ որ կարգէ դուրս հանձայն իրեն համեմատ մեծարանք և պատիւ ստանայ : Այսպիսի ճակատագրի մը հանդիպեցաւ Հոմերոս հին ատենէն 'ի վեր , ոչ միայն իրեն ազգակից Յունաց մէջ հապա նաև բոլոր հին և նոր ուսումնական աշխարհի : Զմիւռնացիք Տուար կառուցին իրեն փառացն և պատուոյն . Արգոսացի Ապոլոնէ ետքը երկրորդ պաշտպան սեպեցին զՀոմերոս . Սոլոն , Յունաստանի ամենէն երևելի քաղաքակիրթ միաբը , հրաման քրաւ որ անոր զիրքերն վարժարանաց մէջ կարգան համբալք : Եսքեղէս , Սոփոկլէս և Եւրիպիտէս , Յունական ողբերգութեան նախահարքը իրեն հետեւելը պարծանք համարեցան . Արիստոտել հնոց մէջ ընտրելագոյն բանադարձ ըսաւ թէ վիպասանական քերթութեան ծնունդ , անուան և կատարելութիւն տուողն Հոմերոսի հանձարն եղաւ . որովհետև իր մէ ետքը եկող ամէն վիպասան քերթողք թէ նիւթոյն առաջարկութեամբ և թէ

քերթութեանոյն կարգաւորութեամբ զՀոմերոսն ջանացին օրինակել :

Աղեքոսանդր մեծ թագաւորն ալ որ փառասիրութեամբ լցուած բոլոր Սիւրի մեծութիւնն իրեն առաւ , միայն Աքիլէսի վրայ կը նախանձեր որ իր բաջութիւնքն գովող այնպիսի քերթող մը գտաւ , և կը փափաքէր անոր Իդիակականին մէջ Թերսիտէս ( ամենէն անարգ անձն ) ըլլալ , բան ուրիշ քերթողած գրուածոցը մէջ Աքիլէս : Իր սուրն ու Հոմերոսի գիրքը չէր հեռացնէր , ինչուան քունին մէջ ալ բարձին տակը կը դնէր կըսեն : Յաղթեց Գարեհի , ու իրմէ ժառանգաց բաղմագանձ ճոխութեանցը մէջ ախանակուռ տուփ մը գտաւ , հոն ամփոփեց Հոմերոսի գիրքը :

« Այնպիսի գանձ մըն է այս , կըսէր , որ ամէն բան կարժէ » :

Լոնգինոս անուանի բանասէրը Հոմերոս բաղգատելով ուրիշ ամէն մատենագրաց լեզուին , անոնցը մարդկեղէն կը համարէր , Հոմերոսինը միայն Աստուածային :

Իսկ մեր Խորենացին , որ իր բոլոր մատենագրական հմտութիւնը և ուսումնականութիւնը յունական գրքերով ըստացեր էր , ու անոնց ինքզինքը մեծապէս երախտապարտ կը համարէր , Հոմերոսի քերթութիւնը այնչափ մեծարգոյ և ազնիւ կը սեպէ , ուր այնպիսի քերթութեան մը , կըսէ , Հոմերոսէն ետքը եկողները լսելու իսկ արժանաւորութիւն չունենին : Հոմերոսի մէկ զլուար յատկութիւնն ալ իր ընտիր բարոյականն է . կրթել և զուարճացնել , այս եղած է միայն իրեն նպատակը , որով և հեռու նոր ազգաց շատ քերթողական երևակայութեան և ուստի և իրաւամբ կընանք Սուրբն Բարսեղի հետ զուրցել թէ « Հոմերոսի բոլանդակ քերթութիւնքը ուրիշ բան չէն , բայց եթէ առաքինութեան գովեստ և մարտեան պարտաւ » :

ԽՄԲԱԿԻՐ—ՏՆՕԲԵՆ

Ա. ՃԻՎԱՀԻՐՃԵԱՆ

Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԳԱՐԱՆ